

թիւն կը յարժէ արևմտեան ու արևելեան Հայերուն մէջ, ինքը՝ դեռ երէկ անձանօթ հարուստ մը՝ այսօր հանրածանօթ մեկենաս մը կը դառնայ, և տարիներուն հողովումովը ու Ղուկասեան մրցանակին կանոնադրապէս տրուելովը, պիտի ստանայ ժողովրդականութիւն մը զոր երբեմն տասնեակ հազարներով բուպլի կտակող մը չի գտնէր:

Յովսէփ Իղմիրեանցէն և Աւետիս Ղուկասեանէն ետքը՝ բանասիրական նոր մրցանակի մը հաստատման պատիւը որ՞ն պիտի վիճակի,— կարելի չէ գուշակել անշուշտ, Բայց միշտ հաճելի է մաղթել որ այս անգամ ալ մեր հարուստներէն մէկը ըլլար, աչքին առջև ունենալով այդ երկու գրասէր բարեբարներուն մրցանակները, մեր մտաւոր կեանքին համար անոնց կազդուրիչ ազդեցութիւնը, և մանաւանդ հետեւելով՝ իր մտադրած բարիքը իր կենդանութեանը ընելու առողջ սկզբունքին:

Ս. Գ. ՍԱԹՈՒՆԵԱՆ

«Առւմալքի ընթերցողներին լալտնի է, որ Շուշուայ կոնսիստորիալի դէմ լարուցուած էր գատ ինչ որ մի մետրիքական կեղծելու մասին, ի միջի որոց և նորա նախագահ սրբ. Գարեգին Սաթուհեանի դէմ. լալտնի է նաև թէ ինչպիսի ուժգնութեամբ լաղթանակ տարաւ ճշմարտութիւնը և Սրբազանը նահանգական դատարանի կողմից անպարտ ճանաչուեցաւ: Սպասուում էր սակայն, որ նա՛. դատարանի դատախազը կըողքէ դատական պալատին: Սակայն անցաւ սահմանեալ ժամանակամիջոցը և ըողք չներկայացուց:»

Արդ՝ ինչպէս լուում ենք հաւաստի աղբիւրներից, գրուում է այդ հետաքրքրական գործի մանրամասն և պաշտօնական վաւերաթղթերով լի պատմութիւնը, որ շուտով պիտի լանձնուի տպագրութեան:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Արժանապատիւ Հայր խմբագիր,

Նրեք ամսից աւելի է, որ մասնաւոր գործերիս պատճառով գրեթէ շարունակ բացակայելով քաղաքիցս՝ աղատ ու լարմար ժամանակ չունեցալ դժբախտաբար «Առւմալիդ» վերջին համարներին որ և է առանձին յօդուածով կամ գրութեամբ աշխատակցելու:

Թէև հանդիսիդ լարգելի ընթերցողների համար մի կորուստ չէ կարող լինել անշուշտ, երբ չը կալ իմ անունը «Առ-

մալի) էջերում, ¹⁾ բայց ես սկզբանէ անտիզ գրական ասպարիզի վրայ ոչ միայն ընթերցողների համար եմ մի նուաստ գրիչ շարժել, այլ և գրասէր սովորութեանս հետեւելով՝ կամեցել եմ լազուրդ և բաւականութիւն տալ նոյնպէս գրական ճաշակիս ու ցանկութիւններս այնպէս, ինչպէս միշտ լատով է եղել իմ բնաւորութեանն ու հասկացողութեան:

Սակալն...

Ուրեմն և սաստիկ ցաւ է ինձ պատճառում, երբ ընթացիկ կեանքի զանազան աննպաստ հանգամանքներից ստիպուած՝ ժամանակ առ ժամանակ դադարում եմ գրելուց, և կամ՝ աւելի ճիշտն ասած, երբեմն երբեմն, մանաւանդ վերջին տարիներս, երևում եմ աստարէզի վրայ նամակադրիս սիրած ձևի գրուածներով՝՝ փոխանակ շարունակաբար մասնակցելու և գործելու արդեօք, ինչպէս որ պատանեկութիւնիցս ի վեր լարատե բաղձանքս է եղած:

Բայց...

Բայց առօրեայ կեանքի այդպիսի ձախողակի հանգամանքները և այլն բնականաբար վիճակուած է, կասէք դուք երևի, մեր գրեթէ բոլոր գրական գործիչներին:

Այ՛, շատ լաւ, դիցուք թէ այդպէս է. սակալն մի մոռանաք, խնդրեմ, որ համեմատութիւնը լարաբերական պիտի լինի, — Անհատականութիւնը, բնաւորութիւնը, հասկացողութիւնն ու սովորութիւնը, վարքն ու բարքը, ձեռք բերած ուսումն ու հմտութիւնը, կրթական ճաշակը, միջավայրը՝ մի խօսքով անհատի ամբողջ կեանքը իւր աշխարհադէպ տեսութեամբ ամեն մի գործիչի նոյնը չեն հարգաւ Հետեւապէս և աշխարհ է, որ համեմատութիւնը, ինչպէս ասում եմ, լարաբերական պէտք է լինի — Եւ ահա ես ճանաչում էի մի հալ հեղինակ, որ լրջօրէն ասում էր իւր ընկեր-բարեկամներին՝ «եթէ դուք ձեր ալդ սեղանի վրայ զ ու ու ն ա էլ անծէք, ես այս սեղանիս վրայ, ամենքիդ ներկայութեամբ, մի և նոյն ժամանակ ոչ միայն լօղուած կը գրեմ, այլ և բանաստեղծութիւն էլ կը շարադրեմ ոտանաւորներով: Եւ ի հարկէ դարձանալի չէր լինիլ ուրեմն, որ մեր այս հեղինակի ալ կերպ արտադրած գրութիւնները զ ու ու ն ա է ու ն արժանի բանաստեղծութեան ձև ու բովանդակութիւն ու նենային: Տեսել եմ խմբագիր, որ իւր լրագրի «առաջնորդող կամ լետնորդող» լօղածներին համար առաւելապէս փողոցներումն էր նիւթ փնտռում և աղմկակից սրճարաններին ու պանդոկներին մէջ գրում, որոնց արտաշնչած բուրմամբ էլ համեմտած էր այնպիսի գրուածների պարունակութիւնը: Ներկայ եմ եղել տարբարնում, երբ պարբերական իրատարակութեան որ և է առաջագիր աշխատակից եկել է այնտեղ և ամենքի ներկայութեամբ՝ կանգնած շարունակել է գրել հետեւեալ տաս-

¹⁾ Մեզ միշտ ցանկալի է Ձեր աշխատակցութիւնը:

ներորդ կամ քսաներորդ գլուխը իւր երկարախօս շարադրութեան՝ երկայնաբանութիւն, որ եթէ թողնէին բազմաբեղուն հեղինակի կամքին, անվերջ կը շարունակուէր լաւտեանս: Վերջապէս կային և այսօր էլ գոյութիւն ունին ու բազմանում են «գրողներ», որոնց համար արդէն չահաււտ զբան ու փեշակ» դառնալով տպագրութիւնը առհասարակ՝ էլ ոչ հարազատ լեզուի լատուկ ձևեր ու բառեր, էլ ոչ քերականական կանոններ ու բացատրութիւններ, էլ ոչ պարզ ու մաքուր՝ հայրնթերցողի ոգուն ձօտիկ ոճ ու դարձուածներ, մտքերի վայելուչ արտայայտութիւն, նրբութիւն—մի խօսքով. սեպհական կեանք ու ոգի—ոչ մի նշանակութիւն չունին. բաւական է, որ գոյորչուած գրութիւնները թէ ինքնուրոյն և թէ թարգմանական առատութեամբ և անմտաբար «թխուին» խեղճ հայ գրականութիւնը հարստացնելու համար և այլն, և այլն—Միթէ ուրեմն կարելի է ենթադրել, որ ամենքն էլ մեր գրական գործիչներից այսպիսի բացառիկ շնորհքներով օժտուած լինին, շնորհքներ, որոնց արժանանում են միայն այն ընտրուչ «գրողներ», որոնք անգիտակցաբար ասես հետևելով «դէկադէնդ» կոչուած «անկման դպրոցի» արտառոց, վիժեալ ուղղութեանը՝ ցոյց են տալիս իրանց աշխարհայ ազիտութիւնը մայրենի լեզուին հմուտ լինելու գործի մէջ. — Սթէ հայոց գրական լեզուն երբ և իցէ անկման շրջաններ է ունեցել, և այժմ, ունեցել է, սորա արդի դրութեանը նայելով՝ ներկայ ժամանակս էլ անկման շրջաններից մէկը պէտք է համարել, որի դէմ թէև հնարներ ու միջոցներ կան առաջն առնելու, սակայն ցաւ է ասել, որ տղէտ լամառութեամբ արհամարհում են այսպիսի օգտակար բժշկութիւնը...

Բայց հն, ես մոռանում եմ, որ մենք արդէն քսաներորդ դարումն ենք ապրում և էլ այսպիսի տարածած բժշկութեան կարիք ամենևին չունենալով՝ ժամանակիս ոգուն լատուկ շոգու և էլէքտրականութեան դօրութեամբ պիտի շարժուին ներկայ մարդկանց բոլոր գործողութիւնները...

Ֆրանսիական ակադէմիայի նշանաւոր անդամ եթանասնամեայ Էմիլ Լիտրէն՝ գրական փիլիսոփայութեան նոր հիմնադիր Օգիւստ Կօնտի հետևողներից ամենամեծ մատենագիր — ուսուցչապետը, իւր մայրենի «Ֆրանսերէն լեզուի բառարանը ¹⁾ կազմելու և հրատարակութեան կէտին հասցնելու համար—բազմաթիւ ու բազմաթիւ տարիների աշխատանքի պէտք ունեցաւ, այնպէս որ «երբ ես, ասում էր հանդուցեալը, այսպիսի մի երկարատև ու ծանր աշխատութիւն վերջացրի՝ տեսալ որ կեանքիս վերջին էլ եմ հասել»։ Դեռ մի կողմն եմ թողնում Ֆրանսիական ամբողջ ակադէմիան, որի «անմահ» վերակոչեալ քառասնեակ անդամ-

¹⁾ Dictionnaire de la Langue Française

ների գիտնական կաճառը մի քանի տասնեակ տարիներով մեծ երկունքի մէջ է մտնում իւր ակադէմիական բառարանը և քերականութիւնը վերահրատարակելու գործի համար: Իսկ մեզ մօտ, մեր մեծաշնորհ (գրողները) մի ինչ որ անիմանալի հրաշքների զօրութեամբ ոչ թէ մայրենի, այլ օտար լեզուի լիակատար բառարաններ են լօրինում և շուտով էլ հրատարակութեան տալիս՝ տեսն դարձեալ նոյն շոգու աղղեցութեամբ: Էլ չեմ խօսում սուենկերի պէս բանող «հատորիկներին» մասին, որոնց բովանդակութիւնը վերսկզբում գոլորշուտ գրութիւնների առանձին տպագրութիւններ են մի և նոյն տղեղ պակասութիւններով:

Հռչակաւոր Էանէստ Ռընանին հինգ-վեց տարի էր հարկաւորում իւր որ և է զլիսաւոր երկերից մէկը լոյս հանելու՝ այն, հինգ-վեց անգամ սրբագրելուց լետոյ: Ըստ այս մի և նոյն մեծ վարժապետը, որ կարծես այնպէս դանդաղ գործելու միայն ընդունակ էր՝ թէ իւր դասախօսութիւնների և թէ մանաւանդ հրատարակական այլ և այլ հանդէսների միջոցին աշակիսի ընտիր ու մաքուր լեզուով էր արտալայտում առաւելագէտ իւր սկեպտական փիլիսոփայի մտքերը, որ սղագրութեամբ անմիջապէս սպիտակի վրայ անցնելով՝ դրական պերճախօսութեան և իւր գլուխ-գործոց գրուածների շարքն էին դառում:

Փարիզի Ecole Normale կոչուած լալտին բարձրագոյն դպրանոց—ուսուցչանոցի նախկին պրոֆէսոր Լյուփոն Արու գերմանադէտ անուանի հրատարակախօսը՝ այն, հրատարակախօսը, երբ կամեցաւ մի գիրք գրել և հրատարակել իւր հայրենիքի թշնամի լաղթական Գերմանիայի մասին՝ չը բաւականանալով իւր ունեցած գիտնական հմտութեամբ, իրանց մալրաքաղաքի բազմաթիւ գրադարանների մէջ եղած ամեն լեզուով և ուղղութեամբ գրուած անհուն տեղեկութիւններով՝ ճանապարհորդեց անձամբ այն երկրում, ծանօթացաւ այնտեղի հասարակութեան վարքին, բարքին, սովորութիւններին, աչքով տեսաւ, հմտաբար ըմբռնեց գերմանացիների ամեն տեսակ կեանքըն ու կացութիւնը, հասկացաւ այն երկրի ժողովրդի այլ և այլ դասերի իրարու հետ ունեցած լարարերութիւնները և այս բոլորը բաւական ժամանակ ուսումնասիրելուց լետոյ՝ վերադարձաւ հայրենիք և այս թէ լոյս հանեց իւր աշխատութիւնը... դարձեալ մի ուրիշ և տարբեր օրինակ... սակայն այսքանն էլ կարծեմ բաւական է ապացուցանելու, թէ որքան տարբեր ու անմեան հասկացողութիւններ կան գրական գործեր ձեռնարկելու, կատարելու և հրատարակ հանելու համար:

Գրականութեան որ դպրոցի ուղղութեան էլ պատկանի հեղինակը—եթէ աստուածալին հրով վառուած այն հանձարձերից չէ, որոնք լափշտակելով ամբողջ մի աղգի զարգացած կարգացող-գրող դաս և մինչև անգամ ընթերցող հասարակութիւն ու ժողովուրդ, առիթ են տալիս իրանց աղգի գրականութեան մի որոշ ժամանակաչափն առաջանալուն, —որ

դպրոցի ուղղութեանն էլ, ասում եմ, պատկանի հեղինակը պէտք է անպատճառ աշխատէ, ուսումնասիրէ, մշակէ իւր ձեռնարկած գործը հէնց իւր սիրած ուղղութեան մէջ ևս հետևողաբար վարուելով, Բաց արի տես, որ ոչ մի գրական ուղղութեան դպրոց չը կայ իսկպպէս մեզանում, և գրութիւնների կամ տպագրութիւնների մեծ մասը, ամենամեծ մասը գրեթէ քմահաճ, շինծու, անբնական, խառն ի խուռն, անլեզու, անսիրտ բաներ են. աչնպէս որ ճաշակազէտ ընթերցողը զգուցելով ներկայիս այսպիսի անճոռնի երևութիւններից՝ դիմում է դարձեալ անցած-գնացած ժամանակների անմահ հեղինակներին և իւր ընթերցատիրութեան ծարաւը նոցա սրտաշարժ, հոգեբուխ աւելնով գրած ստեղծագործութիւններով է կոտորում, լազեցնում...

Չը մոռնամ սակայն, Հայր խմբագիր, որ Ձեր «Առմար» հանդիսի մէջ աննշան մասնակցութեանս վրայ է իմ խօսքը՝ կամաւոր մի աշխատակցութիւն, որ տարուս սկզբից սիրով լանձն առաւ կատարելու «ըստ չափու կարողութեան» և—ինչպէս ասացի—ըստ իմ բնաւորութեան ու հասկացողութեան: Եւ հանձն, այս անհատակաւ լատկութիւններիս եմ պարտական, որ հետեւելով մաքուր գրականութեան խտտապահանջ ու կանոնաւոր դրութեան առհասարակ՝ խառնագիր ու առատագիր չեմ եղած երբէք, և լօղուածներ ու գրութիւններ թ խ ե ւ ի դ ու ը ս տ ա լ ա տ ե լ ի է եղել ինձ «ի սկզբանէ անտի»: Ընդհակառակը՝ շատսր չափէ՝ մէկ կտրէ՝ ժողովրդական առածը և Աստուածային Մեծ Վարդապետի ստուք զկայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ լաւէտ ճշմարիտ ասացուածը մշտապէս նշանաբանս են եղած թէ հասարակական նուաստ և թէ մանաւանդ գրական նուաստագոյն գործունէութեանս մէջ, որի արժէքը անշուշտ որակութեան և ոչ թէ քանակութեան մէջ եմ որոնել: Եւ ինչպէս կարող էի ունենալ նոյն որակութեանը հաւասար քանակութիւն, քանի որ երեսուն և երկու տարուալ ընթացքում՝ երեսուն և երկու կոպէկ անգամ այս գործունէութեամբ չը վաստակած, այլ և ընդհակառակը—խիստ շատ անգամ տուժած, կորուստներ ունեցած՝ ձրի ու ազերախտ այս աշխատանքին դարձեալ նուիրել եմ շատ և շատ թանկագին ժամեր, բազմաթիւ սիրուն օրեր—դարձեալ այնպիսի մի սրտագին սիրով, ինչպիսին կարող է զգալ և արտայայտել մի մարդ զէպի իւր գուցէ ապերախտ, բայց իւր կենդանի արգանդում արիւն ու մարմին առած հարազատ որդին... Սակայն բաւական է:

Ահաւասիկ, Հայր խմբագիր, թէ ինչ ունէի առ ալժմ ասելու («Առմարիդ») այդ վերջին համարներին առանձին լօղուած չը տալուս նկատմամբ: Ասում եմ առ ալժմ, որովհետև կարելի է դեռ էլի շատ բան մնաց գրելու և խօսելու...

Ընդունեցէք, խնդրեմ, և այլն.

Ն. ՅԱՐՈՑ

19-ն Հոկտեմբերի 1902.

Թիֆլիս.